

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյանի(Վաղ.) գյուղապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետի /ծածկագիր3.3-2/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի հայտարարություն

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ (ՎԱՂ.) ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2-ՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ
(ԾԱԾԿԱԳԻՐ 3.3-2) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետը՝

- ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին,

-աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ.

ա)ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր և զեկուցագրեր:

բ)վարում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, նրանց վերաբերյալ ցուցակները.

գ)մասնակցում է զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանը.

դ)աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.

ե)աջակցում է զինճառայողների ընտանիքների, զինճառայությունից արձակվածների և պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.

զ)աջակցում է երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը.

է)իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

ա) միջնակարգ կրթություն.

բ)պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

գ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա) գրավոր դիմում (հանձնաժողովի անունով),

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. մարտի 3-ի թիվ 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի

պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),

է) անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Բաղրամյանի (Վաղ.) գյուղապետարանի շենքում (Շինարարների փողոց N 47) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, (ք. Արմավիր Խ. Աբովյան 71) ամեն օր ժամը 9:00-ից մինչև 17:00-ն՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Բաղրամյանի (Վաղ.) գյուղապետարանի աշխատակազմ (գ. Բաղրամյան, Շինարարների փողոց N 47 հեռ.՝ 091-04-35-35), ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (ք. Արմավիր Խ. Աբովյան 71) հեռ.՝ (0237) 2-07-70 (0237) 2-76-49:

Մրցույթը կկայանա 2012թ դեկտեմբերի 4-ին ժամը 12:00-ին՝ Բաղրամյանի(Վաղ.) գյուղապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2012թ. նոյեմբերի 16-ը:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ գ. Բաղրամյան Շինարարների փողոց N 47

Հեռ.՝ /0231/ 6-26-62 /091/ 04-35-35